ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 թվականի N 8-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6 – րդ կետի պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Աբովյան համայնքի ավագանու թիվ 2-րդ նիստի օրակարգը՝

1. Աբովյան համայնքի ավագանու 2017թ-ի հունվարի 19-ի թիվ 2-Ա, թիվ 3-Ա որոշումները չեղյալ ճանաչելու , թիվ 4 և թիվ 5-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին
2. Աբովյան համայնքի վարչական և ֆոնդային բյուջեների ծախսային մասերում փոփոխություն կատարելու մասին
3. Աբովյան համայնքում 2017 թ-ին << Տեղական տուրքերի և վճարների>> դրույքաչափերը սահմանելու մասին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 թվականի N 9-Ն

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 2-Ա,ԹԻՎ 3-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ,ԹԻՎ 4 ԵՎ ԹԻՎ 5-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական Ակտերի Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ, 75-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արարատի մարզպետի 2017 թ-ի հունվարի 30-ի թիվ 1/14/410-17 գրությունը .

համայնքի ավագանին որոշում է՝

1. Չեղյալ ճանաչել Աբովյան համայնքի ավագանու 2017 թ-ի հունվարի 19-ի <<Աբովյան համայնքի 2017 թվականի բյուջեի եկամտային մասում գույքահարկի գումարը պակասեցնելու մասին >> թիվ 2-Ա և <<Աբովյան համայնքի 2017 թվականի բյուջեի եկամտային մասում հողի հարկի գումարը պակասեցնելու մասին>> թիվ 3-Ա որոշումները:

2. Աբովյան համայնքի ավագանու 2017 թ-ի հունվարի 19-ի <<Աբովյան համայնքի ղեկավարի աշխատավարձը,համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 4 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)որոշման ամսաթիվ և թվագրում տողում <<N 4>> բառերը փոխարինել <<N 4- Ն>> բառերով:

2)որոշման հավելվածի <<գեղմասվար>> և <<համակարգչային օպերատոր>> տողերում <<0.5>> և <<39000>>թվերը փոխարինել <<1>> և <<78000>> թվերով:

3. Աբովյան համայնքի ավագանու 2017 թ-ի հունվարի 19-ի << 2017 թվականի Աբովյան համայնքի բյուջեի հաստատման մասին>> թիվ 5-Ա որոշման ամսաթիվ և թվագրում տողում <<N 5-Ա>>բառերը փոխարինել <<N 5-Ն>>բառերով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ կողմ

6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ կողմ

7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 10-Ն

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները.

համայնքի ավագանին որոշում է՝

1. Վարչական բյուջեի 01.01.01.51 կառավարման մարմնի պահպանում ծրագրի 4241 հոդվածից 50.0 հազ. դրամ գումարը պակասեցնել և նույն գումարի ուղղվածությունը տալ 4232 հոդվածին՝ համակարգչային ծառայության գումար:
2. Ֆոնդային բյուջեի 09.06.01.51 ծրագրի 5112 հոդվածից 2000.0 մլն. դրամ գումարը պակասեցնել և ուղղվածությունը տալ 04.03.02.55 ծրագրի 5112 հոդվածին՝ գազաֆիկացման գումար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՅՈՒՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 04201558

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 թվականի N 11-Ն

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017Թ-ԻՆ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ» ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ‹‹Տեղական Ինքնակառավարման մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով, ‹‹Տեղական տուրքերի և վճարների մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով,

համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի.

2. Ուժը կորցրած ճանաչել 29.11.2016թ-ի ավագանու N 54-Ն որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳԱՐԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 04201558

Հավելված
Հաստատված Աբովյան համայնքի
ավագանու 06.02.2017թ. 11-Ն որոշմամբ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017Թ-ԻՆ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ» ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ‹‹Տեղական Ինքնակառավարման Մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով, ‹‹Տեղական տուրքերի և վճարների մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով,

համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.

բ) սույն կետի <<ա>>- ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ.

500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 100000 դրամ.

գ) Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ.

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կաւ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի < ա> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենք երի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 5000 դրամ:

4) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 200000 դրամ:

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ:

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույտվության համար՝ օրացուցային տարվա համար 50000 դրամ:

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 9000 դրամ

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ:

բ) ծխախոտի արտադրանք վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

մինչ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 9000 դրամ

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ:

8) Համայնքի տարածքում՝

բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա) հիմնական շինությունների ներսում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 դրամ:

բ) ոչ հիմնական շինությունների ներսում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ:

10) Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ) բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

11) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ;

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

դ)սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,

ե) համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ

գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 375 դրամ,

զ)եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան՝ 150 դրամ:

12) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 100000 դրամ:

13). Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար յուրաքանչյուր մեքենայի համար սամանվում է՝ 10000 դրամ:

14. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 500000 դրամ:

15) Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0.5 գործակցով:

Տեղական վճարներ

16) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000դրամ:

17) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար, տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ սահմանվում է՝ 10000 դրամ.

18) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 5000 դրամ:

19) Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ 1000 դրամ.

20) Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր ամսվա համար՝

ա) յուրաքանչյուր բնակչի համար 0 դրամ

բ) սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար 250 դրամ:

Ուժը կորցրած ճանաչել 29.11.2016թ-ի ավագանու N 54-Ն որոշումը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ՄՈՒՐԱԴՅԱՆ